

ԱՆԵԿԴՈՏԻ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ, ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ,
ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԸ

Անեկդոտը, որը զվարճալի պատմություն է, անկասկած արժանի է հատուկ լեզվաբանական ուսումնասիրության: Այն այս կամ այն ձևով հանդիպում է ներազգային խոսքային մշակույթում, սակայն իրականում այս ժանրը պատկանում է խոսքային հաղորդակցմանը, որին բնութագրական է իրավիճակաթեմայի համատեղումը ընթացիկ հաղորդակցման իրավիճակի հետ [6, 15]:

Անեկդոտը պատկանում է բառային հյուսվածքի բանավոր տիպերի թվին (որը համապատասխանում է բառի ծագումնաբանությանը՝ «անտիպ») և կազմվում է բանահյուսական տեքստերի օրենքներով:

Լեզվաբաններից շատերը, որոնք զբաղվել են այս ժանրի ուսումնասիրությամբ, նախ և առաջ կարևորում են դրա համատեքստային և իրավիճակային բնույթը: Կուռզանովը իր «Անեկդոտը՝ որպես ժանր» աշխատությունում, հիշատակում է Ա. Մորուայի խոսքերը. «Անեկդոտը, որ պատմվում է հասկանալի չէ, թե ինչ առիթով, վիրավորական է» [10, 599]:

Անեկդոտի պատմությունը առաջանում է որոշակի կենսական իրադրությունից, այն պետք է պատմել «տեղին», քննարկվող կենսական իրադրության «համամանությամբ»: Այս իմաստով, այն կարելի է համարել «կիրառական արվեստի» յուրահատուկ ձև, դրա պատմությունը «կպցվում է» խոսակցության թեմային, որոշակի կենսական իրադրության իմաստավորման համար [9, 6]:

Այս ժանրի հասարակական բնույթի մասին խոսում է նաև Շիշկովը: Անեկդոտը, ըստ վերջինիս, ինքնին խոսակցության միջոց է և առիթ: Դրա գոյությունը հնարավոր է միայն հասարակական միջավայրում, առնվազն ենթադրելի ունկնդրի /զորուցակցի/ առկայության դեպքում: Իհարկե, չի կարելի չոջանցել այն տարածված փաստը, որ անեկդոտ պատմելը և դրա վրա ծիծաղելը ինքնին ներկայացնում է ծիսակատարություն, որոշակի ենթամշակույթ: Այսինքն՝ համատեքստից դուրս անեկդոտ չկա: Լինելով մշակույթի երևույթ, բանավոր ստեղծագործություն՝ այն գործ ունի նախ և առաջ մարդկանց բանավոր խոսքի, կենդանի հաղորդակցման հետ:

Նշենք, որ ամեն մի կոնկրետ հաղորդակցում ունի իր օրենքները, իր չափանիշները: Եվ այս տեսակետից միանգամայն յուրահատուկ է կատակային հաղորդակցումը կամ, ամերիկյան հանրագիտարանի տերմինաբանությամբ, կատակային հարաբերությունը: Վերջինս սահմանվում է որպես երկու մարդու կամ խմբի միջև հասարակական փոխազդեցության ձև, որում մեկը կարող է

կամ նույնիսկ պետք է կատակի, ծաղրի մյուսին, իսկ վերջինս չպետք է վիրավորվի: Կատակային հարաբերությունը միավորում է ընկերությունը և ատեղությունը ու հիմնականում հնարավոր է այն իրավիճակներում, որտեղ ենթադրվում է ընդհարում կամ մրցակցություն, սակայն այն պետք է շրջանցվի [18, 601]:

Ընդհանրապես հաղորդակցումը կազմված է «հեղինակ-տեքստ-հասցեատեր» շղթայից: Հաղորդակցության առաջին օղակը հանդիսանում է տեղեկատվության աղբյուրը, որը հեղինակին շրջապատող իրականությունն է: Երկրորդ օղակը համարվում է հեղինակը /հաղորդիչը, որը մշակում ու իր ուրույն ձևով կողավորում է ստացված տեղեկատվությունը: Նրան հաջորդում է տեղեկատվության հաղորդման միջոցը, որը տվյալ դեպքում տեքստն է: Հաղորդակցության մյուս բաղադրիչ տարրը հասցեատերն է, որը ստանձնում է տեղեկատվության սպառողի դերը [2, 26-27]:

Այս երրորդ օղակը անեկդոտի ժանրում հատկապես կարևորում է Պոչեպցովը: Վերջինս դիտորդի, ընթերցողի և լսողի համար կիրառում է մեկ տերմին՝ ընկալող / recipient /: Ընկալողը կարևոր գործոն է, չնայած որ գոյություն ունի հետին պլանում: Հենց հանուն նրա է, որ կատակը, անեկդոտը հյուսվում է, իսկ այն գործում է, թե ոչ, կախված է ոչ միայն անեկդոտի որակից, այլև ընկալողի «որակից»:

Այս ժանրի համատեքստային, իրավիճակային բնույթը շեշտում է նաև Կուռզանովը: Ըստ նրա՝ անեկդոտը յուրօրինակ ժանր-թափառաշրջիկ է, որը պատրաստ է թափանցելու ուր պատահի, միայն թե գլխավերևում տանիք ունենա [10, 7]:

Անեկդոտը ներթափանցում է գործնականորեն բոլոր ժանրերի և առաջին հերթին՝ արծակի մեջ: Այսպիսով, այն նախ և առաջ գոյություն ունի այլ ժանրերի, ավելի շուտ՝ այլ տեքստերի մեջ, որ գործում են իրենց ժանրային օրենքներով: Ինքնին անեկդոտը պետք չէ և քիչ հետաքրքիր է:

Ազգային և համազգային բնույթը բանահյուսության այս ժանրի մեկ այլ չափազանց կարևոր հատկանիշ է: Ինչպես ցանկացած գեղարվեստական ստեղծագործություն, այն նույնպես մի կողմից խոսում է համընդհանուր, համամարդկային երևույթներից, իսկ մյուս կողմից դրանում արտահայտվում է դարի ոգին, տվյալ ժամանակահատվածի կենցաղը՝ իր խնդիրներով, հոգսերով, թեր ու դեմ կողմերով: Բացի ժամանակի ոգուց, այստեղ արտացոլվում է նաև ազգային ոգին, ազգի կերպարը: Յուրաքանչյուր անեկդոտի հերոս/ներ/ հանդիսանում է տվյալ ազգի տիպիկ ներկայացուցիչ, ներկայացնում տվյալ ժողովրդին, ազգի ընդհանուր կերպարը: Հունդորը ազգային է և ազգայնորեն անկրկնելի: Հունդորի ազգային բնույթը սկսվում է հենց իր առարկայից [5, 62]:

Անհատական գեղարվեստական կերպարը իրականացնում է ընդհանուրի կոնկրետ դրսևորումը: Տեքստում ներկայացվում են կոնկրետ օբյեկտներ և երևույթներ, կոնկրետ մարդիկ: Սակայն եզակի փաստը կամ երևույթը իրենից ներկայացնում է ընդհանուր համակարգի իրականացման մասնավոր դեպք: Անեկդոտում ևս կոնկրետ մարդկանց, դեպքերի, իրադարձությունների միջոցով իրականացվում է ողջ «ազգային դրաման»՝ խնդիրները, մոլորությունները, թերությունները, թուլությունները:

Սիանգամայն բնական է, որ այստեղ հատկապես արտահայտություն են գտել նշանակալից երևույթները և, առաջին հերթին, այն պահերը, որոնց դեմ ժողովուրդը ստիպված է եղել պայքարել, և որոնց դեմ էլ ուղղված է ժողովրդի հեզմանքը և ծաղրը: Անեկդոտներում պարզորեն արտահայտվում է ժողովրդի անկոտրում լավատեսությունը, սեփական ուժերի և հոգևոր գերազանցության գիտակցումը: Սրանք թեմատիկայում կենտրոնական տեղ է զբաղում բոլոր կենսական ոլորտներում բացասական երևույթների քննադատությունը՝ սկսած ընտանեկան կեցությունից մինչև համազգային նշանակության հարցերը [11, 17]:

Պատահական չէ, որ առանձնացնում են տարբեր ազգերի անեկդոտ, հունոր, խոսում են ռուսական, հայկական, ամերիկյան, անգլիական, ֆրանսիական և բազմաթիվ այլ ազգերի անեկդոտների, կատակների մասին: Եվ չնայած իրենց ընդհանրության՝ դրանք տարբերվում են միմյանցից իրենց նեղ, զուտ ազգային յուրահատկություններով, ազգային կերպարներով և կենցաղով:

Արտահայտված ազգային բնույթը գալիս է անեկդոտի՝ բանահյուսության ժանր լինելուց: Զանի որ այն, ինչպես նաև բանահյուսության մնացած ժանրերը, հանդիսանում են ժողովրդի ստեղծագործություն, ապա բնական է, որ ժողովուրդը խոսում է հենց իր մասին, քննադատում և ծաղրում է իր իսկ թերություններն ու պակասությունները: Բանահյուսությունն իր ողջ պատմության ընթացքում կապված է եղել ազգային հոգսերի ու խնդիրների հետ [16, 42]:

Եիշտ է, անեկդոտն ունի խիստ արտահայտված ազգային բնույթ, բայց դրա՝ միաժամանակ բանահյուսական բնույթը հնարավոր է դարձնում բանահյուսությանը բնորոշ «թափառող բովանդակությունների» առկայությունը: Այս առումով Կազանը գրում է. «Գերմանիայում ինձ պատմել են անեկդոտ, որն այնտեղ զուտ գերմանական են համարում, բայց կես տարի անց այն լսել եմ մեզ մոտ՝ իբրև Իտալիայից բերված՝ տեղական մթնոլորտի համապատասխան փոփոխություններով: Վերջերս լսել եմ երկու անեկդոտ ֆրանսիական մի ֆիլմում, բայց հետո պարզվեց, որ դրանցից մեկը շատ քիչ փոփոխություններով Դանիայում համարում են «իրենցը»: Պետք չէ զարմանալ կամ փոխառություն կասկածել. մենք գործ ունենք կեցության միանման պայմաններում նույն սյուժեներով սխեմաների տիպիկ բանահյուսական ծնունդի հետ, բայց ,

ինչպես ճարտարապետներն են ասում՝ «ամրացված» կոնկրետ տեղի պայմաններին: Սակայն նույնիսկ նման զուգադիպություններից դուրս էլ ազգային անեկզոտները [9, 14]:

Եվ իսկապես, տարբեր ազգերի անեկզոտների ժողովածուներում կարելի է գտնել միանման սյուժետով բազմաթիվ պատմություններ՝ հաճախ հենց նույն վերնագրերով: Իհարկե, նման կատակները ենթարկված են համապատասխան փոփոխությունների. փոխված են կերպարների անունները, շատ քիչ կարող է փոխված լինել դեպքերի ընթացքը, բայց այստեղ փոխառության հետ գործ չունենք: Պարզապես աշխարհի բոլոր ժողովուրդներն էլ, ամենատարբեր ազգերն էլ մտահոգվում են նույն հոգսերով, միանման խնդիրներով, և բնական է, որ դա առաջին հերթին արտահայտվում է ժողովրդի ստեղծագործությունում՝ բանահյուսությունում, այստեղից էլ նաև անեկզոտում: Այս երևույթը մեկ անգամ ևս վկայում է անեկզոտի համամարդկային, համընդհանուր բնույթի մասին:

Անեկզոտի՝ ժողովրդի ստեղծագործություն լինելու հանգամանքը պայմանավորում է այս ժանրի հիմնական թեման՝ հասարակ ժողովրդի կյանքը, կենցաղը, հոգսերը, մտահոգությունները:

Չունորի օբյեկտը ազգի առավել առաջատար մասի կողմից պատմականորեն հաղթահարված ապրումները, մոլորությունները և թերություններն են [5, 65]:

Այս առումով տեղին է հիշատակել է. Ջոնսի խոսքերը. «բանահյուսությունում ուսումնասիրվող երևույթները մեծ մասամբ առնչվում են հասարակ կամ նույնիսկ «ցածր» թեմաների: Բանահյուսության մեջ մենք գործ ունենք մարդկանց հասարակ ցանկությունների հետ ու շատ հազվադեպ ենք հանդիպում զարգացած փիլիսոփայական, հոգևոր կամ գեղագիտական զգացմունքների: Չանդիպում ենք մարդկանց, որոնք մտահոգված են այնպիսի հոգսերով, ինչպիսիք են առողջության պահպանումը, վտանգից և մահվանից զգուշացումը, ապագայի հույսերը, երջանիկ ամուսնության ցանկությունը» [15, 97]:

Ծիշտ է, մի կողմից անեկզոտում խոսվում է դարերով ծեծված, ամենօրյա, սովորական բաների մասին, հավերժական խնդիրներից և սովորույթներից, սակայն մյուս կողմից, այն ունի իր յուրահատուկ փիլիսոփայությունը, իր ուրույն աշխարհընկալումը: Անեկզոտը սովորեցնում է մանրունքների մեջ բացահայտել խորքայինը և հավերժականը, սովորեցնում է հասկանալ, որ մանրունքներ գոյություն չունեն, որ աշխարհը միասնական է և ամբողջական [10, 61]:

Չարկ ենք համարում նշել, որ անեկզոտի համամարդկային, համընդհանուր բնույթը արտահայտվում է ոչ միայն դրա բովանդակության, սյուժեի մեջ, դրանում սրծարծված խնդիրների ու թեմաների բուն էությանը և բնույթով, այլև

հենց անեղկոտի տեքստի յուրահատուկ կառուցվածքով՝ դրանում որոշակի լեզվական միավորների նպատակային կիրառման շնորհիվ:

Այս ժանրի տեքստերում գործող անձինք կոնկրետ մարդիկ, անհատներ չեն: Իհարկե, այլ ժանրերում ևս կերպարները, դեպքերը, երևույթները հանդիսանում են տվյալ մասնագիտական, գաղափարական, հասարակական խմբի ընդհանուր ներկայացուցիչներ, սակայն նրանք ունեն որոշակի անուններ. հեղինակը իր հերոսի համար կերտում է կոնկրետ դեմք, բնավորություն, թեկուզ և այն հանդիսանում է ընդհանուրի եզակի դրսևորում:

Այլ է պատկերը անեկդոտում: Այստեղ տեքստերի շատ հերոսներ չունեն կոնկրետ դեմք. նախ և առաջ դա է վկայում պատմողի՝ նրանց դիմելու անորոշ ձևը՝ առանց անուններ տալու: Այն փաստը, որ պատմողը անուններ չի տալիս իր հերոսներին, վկայում է այն մասին, որ այս ժանրում խոսվում են համամարդկային, համընդհանուր երևույթների, դեպքերի ու դեմքերի մասին, որտեղ կարևոր է այն, թե ինչ է տեղի ունենում, այլ ոչ թե այն, թե որտեղ կամ ում հետ:

Բնական է, որ անեկդոտում հաճախ կերպարներին պատմողը ներկայացնում է “a man, a woman, two ladies, two friends, a boy, an American, a Russian, an Englishman...” գոյականներով, այսինքն ընդունում է դիմելու ամենաընդհանուր անորոշ ձևը, կամ դրանք էլ կարող են բացակայել, երբ գործ ունենք միայն երկխոսության հետ՝ կազմված գուտ ուրիշի ուղղակի խոսքից. չկա հեղինակի խոսք, անգամ «ասաց այս ինչը» արտահայտությունը: Եւ այստեղ դա չի էլ պահանջվում: Հենց երկխոսությունից էլ ընթերցողը գուշակում է խոսողների սեռը, տարիքը, ազգային պատկանելությունը և այն ամենը, ինչ հարկավոր է անեկդոտը հասկանալու համար: Սա, անշուշտ, խոսում է անեկդոտի համընդհանուր բնույթի մասին:

Անեկդոտին հատուկ է նաև գործողության տեղը, ժամանակը մատնանշող մակբայների բացակայությունը, քանզի վերջիններս այս ժանրում կարևոր չեն: Այն, ինչի մասին խոսվում է կատակներում, միանգամայն ճշմարիտ է աշխարհի տարբեր երկրների, տարբեր ազգերի ու ժողովուրդների համար:

Այսպիսով, վերը նշվածից ելնելով, հանգում ենք այն եզրակացության, որ անեկդոտը, և ընդհանրապես հումորը, ոչ պարզ և ունիկալ երևույթ է: Այս ժանրի առանձնահատկությունները մի կողմից պայմանավորված են դրա՝ բանավոր ստեղծագործություն լինելու հանգամանքով, իսկ մյուս կողմից՝ տեքստի ուրույն կառուցվածքով: Անեկդոտի բազմաթիվ ժանրային հատկանիշներից սույն հոդվածում առանձնացվել են դրա արտահայտված հասարակական, համամարդկային գծերը: Հանդիսանալով հաղորդակցման միջոց և առիթ՝ անեկդոտը չի կարող գոյություն ունենալ համատեքստից դուրս: Այն ծնվում է հասարակական միջավայրում և հասարակության համար: Անեկդոտի ընկալ-

ման և ապակողավորման համար շատ բան է կախված հենց պատմողից՝ նրա ոճից, անգամ դեմքի արտահայտությունից և հնչերանգից: Պակաս կարևոր գործոն չէ նաև հասցեատերը՝ ընկալողը, հանուն որի հյուսվում է անեկդոտը:

Այս ժանրի մեկ այլ կարևոր հատկանիշ, որի մասին խոսվում է սույն հոդվածում, դրա ազգային և համամարդկային բնույթն է: Քանի որ անեկդոտը ժողովրդի ստեղծագործությունն է, հետևաբար բնական է, որ ժողովուրդը խոսելու է հենց իր մասին, ներկայացնելու և անգամ քննադատելու է իր իսկ կենսակերպը, թուլություններն ու թերությունները:

Այսինքն՝ եզրակացնում ենք, որ այս ժանրը միանգամայն բարդ է, բազմակողմանի և շատ ավելի լուրջ մոտեցում է պահանջում, քան կարող է թվալ առաջին հայացքից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Դալալյան Ա.Գ., Կոմիկականի լեզվաոճական արտահայտչամիջոցները անգլերենում, Ատեն. եր. 2001, 170էջ:
2. Арнольд И.В., Стилистика современного английского языка (стилистика декодирования). Л.: Просвещение, 1981. 295с.
3. Бахтин, М.М. Проблема текста, //М., 1976. с. 122-151.
4. Бергсон А. Смех. М. Искусство, 1992, 127с.
5. Боров Ю. Б. Комическое или о том как смех казнит несовершенство мира, очищает и обновляет человека и утверждает радость бытия. М., Искусство, 1970, 269с.
6. Гольдин В. Е., Сиротинина О. Б., Внутринациональные речевые культуры и их взаимодействие // Вопросы стилистики. Саратов: Изд-во Саратовск. ун-та, 1993. с. 9-19.
7. Гореликова М.И.; Магомедова Д.М., Лингвистический анализ художественного текста. М., 1989. 151с.
8. Долинин К.А. Интерпретация текста фр. яз. М., Просвещение, 1985. 288с.
9. Каган М.С. Анекдот как феномен культуры. Материалы круглого стола 16 ноября 2002г. СПб.: 2002, с. 139-147
10. Курганов Е. Анекдот как жанр, 1997, 124с.
11. Латышские народные анекдоты. Рига, Изд.во Акад. наук. Латв. СССР, 1963, 279с.
12. Лотман Ю.М. Структура художественного текста, М., Искусство, 1970, 384с.
13. Моруа А., Семейный круг. М., 1989, с. 599.
14. Шишков С.М. Абсурдный анекдот в культуре. Материалы круглого стола 16 ноября 2002г. СПб.: 2002, с. 139-147
15. Dundes A., The study of folklore, Englewood cliffs, Princeton – Hall // 1965, 481p.
16. Dorson R.M. Folklore in the modern world, Hague, Paris, 1978
17. Pocheptsov G.G., A collection of linguistically based jokes, stories, etc., Kiev “visca skola” Publishers, Head Publishing House, 1981, p.307-325.
18. The New Encyclopedia Britanica, v.6. Micropedia Founded 1768, 15th edition. Chicago, p.982.